Մրցույթ՝ «Երևանի թիվ 186 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2 երկու դասվարի /15-ական/ դասաժամ /, մայրենի-8դասաժամ /4-րդ դասարան/, մայրենի 6-դասաժամ /6-րդ դասարան/, մաթեմատիկա- 5դասաժամ /6-րդ դասարան/ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստա

վորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է Հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

Դիմում/(Ձև 1/,մեկ լուսանկար 3x4 չափի

Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

Անձը հաստատող փաստաթուղթ,

Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք՝ աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/ առկայության դեպքում/,

Ինքնակենսագրություն /Ձև 5/,

Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

Որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր 10:00-ից 15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերին:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի  18-ին, ժամը 14:00-ին,  Երևանի հ. 186 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, Մինսկի 95:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/667086, /010/667240 հեռախոսահամարներով: